

**«ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՐՈՂ ՀԱՅ» ՆՇԱՆԱԿՈՂ  
ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ\***

**Բանալի բառեր** - Վրաստանում ապրող հայ, վրաստանցի հայ, բառային տարբերակներ, վրահայ, վիրահայ, վրացահայ, վիրահայություն, թիֆլիսահայ, թբիլիսահայ, տփղիսահայ, «արտերկրի հայե բառափմաստային խումբ:

**Մուտք**

Մեծ Հայքի հարևան երկրում՝ Վիրքում (Իբերիայում), հայերն ապրել են վաղ ժամանակներից սկսած: Ուխտանես Ուռնայեցու (10-րդ դ.) գրքում պահպանվել է դեռևս 6-րդ դ. վերջին ու 7-րդ դ. սկզբին վերաբերող տեղեկություն հայկական սահմանային Ցուրտավ գաղթավայրի մասին<sup>1</sup>:

Սակայն հայերի գաղթը Վրաստան զանգվածային բնույթ է ստանում Անիի անկումից (1045 թ.) և Բագրատունիների թագավորության վերանալուց հետո: Դավիթ Շինարարի օրոք (1083-1125 թթ.) Անիից տեղափոխված մեծաթիվ հայերի համար հիմնվում է Գորի քաղաքը, որը եկեղեցիներ ու վանքեր ուներ<sup>2</sup>:

Վրաց աշխարհում հայերը հաստատվում էին ոչ միայն սահմանամերձ բնակավայրերում, այլ նաև երկրի ներքին զավառներում և կարևոր քաղաքներում, հատկապես՝ Տփղիսում<sup>3</sup>, որտեղ 631 թ. կառուցվել է Կաթողիկե Ս. Գևորգ եկեղեցին (արաբական արշավանքների ժամանակ հիմնովին քանդվել է, 1251 թ.՝ վերաշինվել, այժմ գործում է), իսկ 754 թ.՝ Հրեշտակապետաց եկեղեցին (քանդվել է 1937 թ.)<sup>4</sup>:

12-րդ դ. վերջին քառորդում Վրաստանում հիմնվում է Հայ առաքելական եկեղեցու թեմ՝ առաջնորդանիստ դարձնելով թագավորանիստ Տփղիսը<sup>5</sup>:

Վրաստանում ապրող հայերը պահպանում էին իրենց մայրենի լեզուն, կրոնն ու ազգային ավանդույթները, սակայն ազգային կյանքում նրանք ա-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.02.2020:

1 Տե՛ս **Աբրահամյան Ա. Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Ա, Եր., 1964, էջ 93: Հմտ. «Թուրք շրջաբերական Տեառն Վրթանէսի Քերթողի (ի) Հայալեզու աշխարհն Ցուրտաւայ», (**Ուխտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 32-33):

2 Տե՛ս **Մատթէոս Ուռնայեցի**, ժամանակագրություն, Եր., 1991, էջ 356:

3 Հմտ. **Ապրդաճեան Ա.**, Պատմութիւն Հայ գաղթականութեան: Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, Քրիստոսէ առաջ Զ դարէն մինչեւ ԺԱ դար Քրիստոսի, հատ. Ա, Գահիրէ, 1941, էջ 204:

4 Տե՛ս **Աբրահամյան Ա. Գ.**, նշվ. աշխ., էջ 94: Տե՛ս նաև՝ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 985:

5 Տե՛ս **Հ. Միքայէլ Զանգեանց**, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 132:

ռանձնակի դերակատարություն գրեթե չունեին, թեպետ 18-րդ դարում այստեղ են ստեղծագործել Նաղաշ Հովնաթանը և Մայաթ-Նովան: Ռուսաստանին Վրաստանի և Արևելյան Հայաստանի միացումից մի քանի տասնամյակ անց՝ 19-րդ դ. կեսերին, դրությունը փոխվում է, և Թիֆլիսը դառնում է արևելախաչյոց կրթամշակութային և ազգային խոշորագույն կենտրոնը, ինչպիսին էր Կ. Պոլիսը արևմտահայության կյանքում:

Պարզենք, թե հայերենում «Վրաստանում ապրող հայ, վրաստանցի հայ» և «Թիֆլիսում ապրող հայ կամ թիֆլիսեցի հայ» իմաստներով բառային ի՞նչ միավորներ են կազմվել և ինչպե՞ս, դրանք ե՞րբ են գործածության մեջ մտել, ձևաբանական ի՞նչ արժեք ունեն, ո՞ր ոլորտներում են գործածվում, ինչպիսի՞ն է դրանց բառարանային գրանցման պատմությունը: Հարևան երկրներում ապրող հայերին անվանող բառերի քննությունը կարևոր է հայերի զանազանությունը ցույց տվող բառերի ամբողջական պատկերը ստանալու, աշխարհասփյուռ հայության «բառային քարտեզը» ունենալու առումով (ընդգծումը մերն է - Դ. Գ.)<sup>6</sup>:

«Վրաստանում ապրող հայ, վրաստանցի հայ» նշանակող բառ չի վկայվել հայոց լեզվի զարգացման աշխարհաբար փուլին նախորդող շրջաններում: Առհասարակ **հայ** վերջնաբաղադրիչով բառեր հայերենում հայտնվել են 19-րդ դարի կեսերից սկսած:

«Վրաստանում ապրող հայ, վրաստանցի հայ, Վրաստանի հայ» նշանակությամբ հայերեն բառերի մի փոքրիկ խումբ կա, որի հիմնական՝ առանցքային միավորները **հայ** վերջնաբաղադրիչով կազմվել են **Վիրք/Վրաստան** երկրանունից ու հարևան երկրի մայրաքաղաքի հին և նոր անուններից ու հանդես են գալիս բառային տարբերակներով:

## Ա. «Վրաստանում ապրող հայ» նշանակող բառային տարբերակները

### 1. Վրահայ

**Վիրք** երկրանվան **-ք** հոգնակիակերտ (տեղանվանակերտ) մասնիկն ընկել է, **վիր** ժողովրդանվան **ի** արմատահնչյունը փոխվել է գաղտնավանկի **ը**-ի՝ դառնալով **վր**-, որին **ա** հոդակապով միացել է **հայ** բաղադրիչը: Հայ-ը բառի հիմնական իմաստակիր միավորն է (հայերենի բառակազմական օրինաչափության համաձայն՝ բարդության երկրորդ բաղադրիչն է իմաստային «բեռի» կրողը):

6 Հմմտ. **Գյուրջինյան Ղ.**, «Պարսկաստանում ապրող հայ» նշանակող բառերը. իմաստակառուցվածքային և բառաբանագրական քննություն, «Վեմ», Եր., 2018, N 1, էջ 75-90: Նույնի Արտագաղթի և սփռման պատմություն. հայերենի «արաբական երկրների հայ» բառաիմաստային խումբը, «Վեմ», Եր., 2019, N 2, էջ 137-158:

**Վրահայ**-ն առաջացել է **Վրաստանի / Վիրքի հայ** բառակապակցության բաղադրիչների ձուլումից: Այս հիմքով ունենք այժմ անգործածական **վրահայ** ածականը<sup>7</sup>, որը բառարանային գրանցում էլ ունի<sup>8</sup>:

**Վրահայ** տարբերակը հանդիպում է 19-րդ դ. վերջերից սկսած: Օրինակներ՝ «Տէր Արիստ. Մեղրաքեան, եպիսկոպոս **Վրահայոց**» (Ղեւոնդ Ալիշան, Այրարատ, բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ Է) (գրաբար տեքստում), «... դժուար թէ ստոյգ չլինի Կորիւնի աւանդածը, այն պատմագրի, որ այնպէս լաւ տեղեակ է Վրացիների կեանքին, մինչև համարել զինքը Վրացի կամ գոնէ **վրահայ**» (Հր. Անառեան, «Ձայնաբանութիւն վրացերէն հայերէնից փոխառեալ բառերի», «Արարատ», 1898, հուլիս, էջ 310):

Մայր Աթոռի «Արարատ» հանդեսի որդեգրած բառային այս տարբերակը տասնամյակներ անց գործածված ենք տեսնում նրա ժառանգորդ «Էջմիածին» ամսագրում: Օրինակներ՝ «Կոչյուն լինելով վրաց աշխարհի եպիսկոպոս, երկար ժամանակ ապրած և թերևս վախճանված Վրաստանում, ոմանց կողմից վրացի կամ **վրահայ** համարված... » (Հր. Անառեան, Մեսրոպ Մաշտոց, «Էջմիածին», 1956, IV-V, էջ 55), «**Վրահայ** հավատացյալ ժողովրդի անունից ես պարտք ունեմ ամենասրտագին և ջերմ շնորհակալության խոսք ասել» («Էջմիածին», 1957, Է-Ը, էջ 14):

Հանդեսում բառի գործածության այլ դեպքեր եղել են նաև հետագայում, ինչպես՝ «**Վրահայոց** պատմական թեմը, իբրև կենտրոն ունենալով Վրաստանի քաղաքամայր Թբիլիսին, դարեր շարունակ միշտ եղել է հոգևոր մխիթարութեան աղբիւր մեր հաւատացեալ ժողովրդի համար» («Էջմիածին», 1972, Թ, էջ 8): **Վրահայոց** ձևը ժամանակին կայունացել է **Վրահայոց թեմ** բաղադրյալ անվանման մեջ (տե՛ս նաև «Էջմիածին», 1984, ԺԱ-ԺԲ, էջ 3 և այլն): Այժմ թեմն ընդարձակ անվամբ կոչվում է Հայ առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցու **վիրահայոց թեմ**, հակիրճ տարբերակով՝ **Վրաստանի հայոց թեմ**:

**Վրահայ**-ը ձևաբանորեն տարաբժեք է. համատեղում է ածականի և գոյականի նշանակություններ. ած.՝ «Վրաստանի հայերին՝ հայությանը բնորոշ» (**վրահայ համայնք**) և գոյ.՝ «վրաստանցի հայ» (**վրահայոց թեմ**): Գոյականի արժեքով, որպես կանոն, հանդես է գալիս գրաբարյան հոգնակի սեռականի ձևով:

Հետաքրքրական է, որ երբեմն նույն բնագրում գործածվում են թե՛ **վրահայ**-ը և թե՛ **վիրահայ**-ը, այսինքն՝ լեզվի զարգացման տվյալ շրջանում արդեն իսկ գործ ունենք տարբերակայնության հետ: Օրինակ՝ Թիֆլիսի «Ժողովրդի ձայն» օրաթերթի 1918 թ. սեպտեմբերի 17-ի համարում «**Վիրահայոց** Ազգա-

7 Հմմտ. «Իսկ Ը. և Թ. դարերու **Վրական** գրականութեան Բ բեղմնաւոր շրջանը կը բացուի, մասնաւորապէս Վիրահայքի մէջ փոթում ունենալով», այլև «**Վրական** վանքեր», «**հայ-վրական** յարաբերութիւններ» (**Ապրդաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 391, 392, 389):

8 Տե՛ս **Մախայանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հատ. 4, Եր., 1945, էջ 355:

յին Խորհրդի նիստը» վերնագիր կա, որի ներքո՝ տեքստում, կարդում ենք. «Վրահայոց Ազգային Խորհրդին յանձնարարուեց.... գաղթականական ընդհանուր գործի վերակազմութեան ընդհանուր ծրագիր մշակել» (ընդգծումները մերն են - Գ. Գ.):

**Վրահայ-**ն այսօր անգործածական է, հնացած, իբրև բառային տարբերակ՝ ոչ կանոնական, փոփոխակ<sup>9</sup>: Գործածությունից բառի դուրս մղվելուն նպաստեցին նրա անբարեհունչ լինելը և հայերենի նորագույն շրջանում **վրա-** բաղադրիչի՝ «Վիրքի» կամ «վրաց» իմաստներով անընկալելիությունը: Ուշագրավ է, որ Արևելահայերենի ազգային կորպուսում՝ ԱՐԵՎԱԿ-ում<sup>10</sup> (ունի 110 միլիոն բառագործածություն), **վրահայ-**ի ոչ մի գործածություն չկա: Սա մի կողմից բառային այս տարբերակի խիստ սահմանափակ գործածության, մյուս կողմից էլ հիշյալ համակարգի տակավին ոչ լիարժեք ընդգրկման վկայությունն է:

## 2. Վիրահայ

Բառը կազմվել է **Վիրք** տեղանունից (-ք մասնիկի անկմամբ և առանց **ի-**ի հնչյունափոխության) և **ա** հողակապով **հայ** բաղադրիչի միաձուլմամբ: Սա, փաստորեն, **վրահայ-**ի անհնչյունափոխ տարբերակն է: **Վիրահայ-**ը կանոնական է, անփոփոխակ և իբրև այդպիսին՝ գերադասություն ունի **վրահայ** փոփոխակի նկատմամբ: Ձևաբանորեն տարաբժեք բառ է. գործածվում է ածականի և գոյականի նշանակությամբ:

Բառակազմության տեսանկյունից ուշագրավ է, որ միջին հայերենում 14-րդ դ. հիշատակարաններից մեկում վկայված է **վիրացի-**ն<sup>11</sup>:

Հատկապես Թիֆլիսի հայ մամուլի էջերում կարելի է կիրառված տեսնել այս բառը, մասնավորապես՝ 20-րդ դ. առաջին տասնամյակից հետո: Այսպես՝ «**Վիրահայ** Ազգային Խորհուրդը ոչինչ չարեց» («Նոր Հորիզոն», 04.12.1918), «Վրաստանի կառավարութեան գրութիւնը **Վիրահայ** Ազգային Խորհրդին» («Գործաւոր», 28.07.1919) և այլն: Ինչպես բնագրային օրինակներն են հուշում, **վիրահայ** բառի առաջ գալը և լայն գործածությունը սերտորեն առնչվում են Վրաստանի հայոց ազգային խորհրդի ստեղծմանը: Երբ 1918 թ. հուլիսի 17-ին Թիֆլիսում գործող Արևելահայոց ազգային խորհուրդը, որի նախագահն էր Ավ. Ահարոնյանը, տեղափոխվեց Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևան, անհրաժեշտություն առաջացավ Վրաստանի մայրաքաղաքում ստեղծելու ազգային մեկ այլ ղեկավար կառույց: 1918 թ. օգոստոսի 2-ին Թիֆլիսում իր անդրանիկ նիստը գումարեց նորաստեղծ մարմինը՝ Վրաստանի հայոց ազգային խորհուրդը

9 Բառային տարբերակների մասին հանգամանորեն տես **Սդայան եղ. Բ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 146-163:  
10 Տես [www.eanc.net](http://www.eanc.net):

11 Հմմտ. «Որ թէպէտ ազգա վիրացի գոլով, այլ կամօք բարեկամ ամենայն եկեղեցեաց»: Տես **Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.**, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 739:

կամ Վիրահայ ազգային խորհուրդը, որը գոյատևեց մինչև 1921 թ. փետրվարի 28-ը, երբ խորհրդային իշխանությունն ազգային այլ կազմակերպությունների հետ կասեցրեց նաև նրա գործունեությունը<sup>12</sup>:

Մինևույն մարմինն անվանելու համար ժամանակի մամուլում որպես տարբերակներ գործածվում էին բաղադրյալ երկու անուններն էլ՝ **Վրաստանի հայոց ազգային խորհուրդ, Վիրահայ ազգային խորհուրդ**, այսինքն՝ **վիրահայ** տարբերակը պաշտոնապես ընդունված էր:

Այժմ **վիրահայ** բառը լայն գործածություն ունի և, ինչպես կտեսնենք ստորև, «Վրաստանում ապրող հայ, վրաստանցի հայե իմաստն արտահայտող բառային տարբերակներից միակն է, որ բառարաններում գլխաբառ է դարձել:

Արևելահայերենի ազգային կորպուսում **վիրահայ**-ը հանդիպում է 76 համատեքստում (43 տեքստում), հոգնակի սեռականի **վիրահայերի** ձևը՝ 110 համատեքստում (46 տեքստում) (հիշենք, որ այնտեղ բացակայում է **վրահայ**-ը):

**Վիրահայ**-ը հանդիպում է գիտական և գեղարվեստական գրականության, մամուլի և հրապարակախոսության լեզվում: Հայաստանցիների առօրյա խոսքում հաճախադեպ չէ: Օրինակներ՝ «Հաղպատում, Սանահինում, Գլաձորում ուսանել են **վիրահայոց** բազմաթիվ ներկայացուցիչներ» («Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003, էջ 544), «Մարմնեղ էր ու հիվանդ, խոշոր էր ու մեղկ, բարձրի, վսեմի, լուսավորի սուր զգացողություն ուներ, որը ժամանակի, **վիրահայի** ճակատագրի ենթագիտակցականի նկուղներում էր բանտարկված» (Ա. Այվազյան, «Եղած-չեղածը՝ մի կյանք», Եր., 2005, էջ 146), «**Վիրահայ** համայնքի առաջնորդներից մեկի՝ Վան Բայբուրդյանի համոզմամբ դա են պահանջում նաև վիրահայության շահերը» («Առավոտ», 20.12.2003), «Վարչապետը հանդիպում կունենա նաև **վիրահայ** համայնքի հետ» («Ազգ», 24.07.2004): Ջավախեցի գրող, գրականագետ Օ. Օքրոյանի մենագրության վերնագիրն է «**Վիրահայ** արձակը» (Եր., 1997):

**Վիրահայոց լեռներ** է կոչվում Հայաստանի Հանրապետության հյուսիսում, Վրաստանի հարավում գտնվող լեռնաշղթան, որը ձգվում է Ջավախքի լեռնաշղթայից մինչև Դեբեդ գետի ձախ ափը, ունի 73 կմ երկարություն, ամենաբարձր գագաթը Լավարն է<sup>13</sup>: Այս տեղանվան միջոցով **Վիրահայ(ոց)** ձևը պաշտոնապես ճանաչված է ընկալվում, մի բան, որ նպաստում է **վիրահայ** տարբերակի առավել ընդունելի դառնալուն:

**Վիրահայ** հիմքից –**ույթուն** վերջածանցով կազմվել է հավաքական գոյական՝ **վիրահայություն**, որը ցույց է տալիս Վրաստանի հայերի հավաքական ամբողջությունը, Վրաստանի հայությունը՝ իբրև ամբողջականություն:

12 Տե՛ս **Մայիլյան Բ.**, Վրաստանի հայոց ազգային խորհրդի գործունեության պատմությունից (1918 թ. օգոստոս – 1919 թ. փետրվար), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2011, N 1, էջ 61-81:

13 Տե՛ս **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 4, Եր., 1998, էջ 806:

### 3. Վրացահայ

**Վիրք** տեղանվան **Վրաց** սեռականի ձևին **ա** հոդակապով միացել է **հայ**-ը: Հիմնականում **վրաց**- բաղադրիչն է կիրառվում Վրաստանին, նրա հիմնական բնակիչներին ու նրանց լեզվին առնչվող հայերեն բառերում, ինչպես՝ **վրացագետ, վրացախոս, վրացական, վրացանալ, վրացասեր, վրացատյաց, վրացերեն, վրացիանալ, վրացի, վրացուհի**: Դա է թերևս պատճառը, որ շատ հայախոսներ նախընտրում են **վրացահայ**-ը: Արևելահայերենի ազգային կորպուսում այս բառը հանդիպում է 64 համատեքստում (54 տեքստում), որ բավական մոտ է **վիրահայ**-ի գործածության ցուցանիշներին: Հոգնակի սեռականի **վրացահայերի** ձևը հանդիպում է 25 համատեքստում (21 տեքստում), որ մի քանի անգամ գիջում է **վիրահայերի** ձևի ցուցանիշներին:

**Վրացահայ**-ը կամընտրական փոփոխակ է, որ նշանակում է, թե այն **վիրահայ**-ին հավասարազոր տարբերակ է, և այս երկուսի միջև գերադասության-ստորադասության հարաբերություն չկա, ու դրանցից մեկին կամ մյուսին նախապատվություն տալը պայմանավորված է առավելաբար ենթակայական նկատառումներով<sup>14</sup>:

**Վրացահայ**-ը **վիրահայ**-ի պես հանդիպում է գեղարվեստական և գիտական գրականության, մամուլի և հրապարակախոսության լեզվում: Օրինակներ՝ «Նրանցից մեկը՝ արագախոս, սնդիկի պես շարժուն **վրացահայ**, ամեն ինչ իր ձեռքը վերցրեց» (Դ. Մուրադյան, «Հրաժեշտ»/«Գնացքներ և կայարաններ», Եր., 2001, էջ 152), «Ուժեղանում է հայ համայնքի դերակատարումը Ռուսաստանում, զարգացման նման միտումներ ունեն **վրացահայ** և այլ համայնքներ» («Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման միտումները» (գեկուցումների դրույթներ), Եր., 2003, էջ 50), «Մրցաշարային աղյուսակը միանձնյա գլխավորում է **վրացահայ** շախմատիստ Դավիթ Հարությունյանը» («Առավոտ», 21.06. 2012):

Ի տարբերություն **վիրահայ**-ի՝ **վրացահայ**-ը ամօրյա խոսքում հանախադեպ է: Ուսանողների և տարբեր մասնագիտացումներ ունեցող դասախոսների շրջանում անցկացրած մեր հարցումները ցույց են տալիս, որ հայաստանցիները նախապատվությունը տալիս են հիմնականում այս տարբերակին: Հարցման մասնակիցները մեկնաբանում են, որ այն ավելի հասկանալի է, քանի որ ուղիղ կապ ունի **վրացի, վրացական** և համանման բառերի հետ:

Հարցման մասնակիցների զգալի մասին **վիրահայ**-ի **վիր**-ը թվում է վրաց իրականությանն առնչվող այլ բառերի հետ բառակազմական կապերից դուրս, քիչ ծանոթ, երբեմն՝ անհասկանալի, անգամ՝ «արիեստական»: Շատերն այն համարում են հնաբույր կամ հնացած, որ իբր անցյալի մասին խոսելիս պիտի

14 Հմնտ. Աղայան Էդ. Բ., նշվ. աշխ., էջ 159:

ասել **վիրահայ**, իսկ արդի Վրաստանի հայերի համար՝ **վրացահայ**: Ոմանք շեշտում են, որ գրավոր խոսքում գործածում են **վիրահայ**-ը, հատկապես երբ խոսքը վերաբերում է թեմին<sup>15</sup> (Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի վրաստանցի չորս ուսանողները, որոնք մասնակցել են հարցմանը, **վիրահայ** տարբերակի համոզված կողմնակիցներ են. նրանց վկայությամբ՝ այդ մոտեցումն իշխող է Վրաստանում ապրող հայերի շրջանում):

Միայն երկու մարդ **վրացահայ**-ի մեջ տեսնում է «վրացացած հայե (այսպես կոչված «շուռ տված») իմաստային բաղադրիչը<sup>16</sup>:

Տարիներ առաջ Թբիլիսիում ապրող մի հայուհի սուր ասաց. «Մեր մասին խոսելիս մի՛ գործածեք **վրացահայ** բառը, մենք վրացիների կամ վրացական հայեր չենք, այլ **վիրահայ**»<sup>17</sup>:

Նախընտրելի համարվող տարբերակի վերաբերյալ հարցման մասնակիցները կիրառում են նաև այսպիսի որակումներ՝ «բարեհունչ է», «զեղեցիկ է»:

**Վիրահայ** և **վրացահայ** տարբերակների գործածության խայտաբղետ պատկեր ենք տեսնում գրավոր խոսքում: Հետաքրքրական է, որ երբեմն միևնույն հրատարակության մեջ միասնական մոտեցում չի դրսևորվում. հանդիպում են թե՛ **վիրահայ**-ը և թե՛ **վրացահայ**-ը: Օրինակ՝ հեղինակավոր «Հայկական սովետական հանրագիտարանի» տարբեր հատորներում տեսնում ենք երկուսն էլ. «XVIII դարում կազմավորվել է **վիրահայ** աշուղական դպրոցը» (հատ. 1, 1974, էջ 494. «Աշուղական պոեզիա» բառահոդվածը) և «... Դավիթ Բեկը հիշվում է որպես **վրացահայ**՝ «մցխեթացի, հայկազյան տոհմից» (XVIII դարում «մցխեթացի» անունը հաճախ գործածվում էր «թիֆլիսեցի» իմաստով)», (հատ. 3, 1977, էջ 302. «Դավիթ Բեկ»):

Տարբերակայնություն է նկատվում նաև հայաստանյան պարբերականներում:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ. «... ավարտուն տեսք ստանալուց հետո տունը կդառնա **վիրահայոց** մշակութային կենտրոն» (11.06.2015) և «Ներկայումս շուրջ կես միլիոնանոց **վրացահայ** համայնքը «Վրաստանը» համարում է իր մայր թերթը» (18.12.2015):

«Առավոտ» օրաթերթ. «**Վիրահայ** գործիչները քննադատեցին ընդդիմությանը» (08.07.2008) և ««Ուրիշ ո՞ւմ ձեռնտու չէ խաղաղությունը Վրաստանումն՝ այսպիսի հարցադրում է արել **վրացահայ** պատգամավորը» (15.10.2005):

15 Դրա վկայությունը կարող է լինել հետևյալ նախադասությունը. «**Վրացահայ** համայնքը, **վիրահայոց** թեմը տազնապատ...» («Ազգ», 04.05.2005): Լրագրի այս անհետևողականությունը կարող է շփոթության մեջ գցել ընթերցողին:

16 Հմմտ. «Երիտասարդը մոտեցավ ինձ ու կոտորտված հայրենով հարցրեց. հա՞յ ես: Պատասխանեցի հայ եմ: Ծիծաղելով ասաց՝ ես էլ **շուռ տված հայ** եմ: Այդպես ծանոթացանք: Նա Փարաջանովն էր» (<https://kinoashkharh.am/2015/01/>, մուտք՝ 11.10.2019):

17 Բայց ահա ծնունդով թիֆլիսեցի նշանավոր արձակագիրը գրում է. «**Վրացահայերին** երկար ժամանակ համարողեն ներշնչում էին, որ աշխարհի ամենատղեղ, ամենապլեբեյ ժողովուրդը հայերն են», «Հայաստանի կողմից անտեսված **վրացահայ** գրողները «հաշիվներ էին մաքրում» միմյանց հետ», «Բերիան ոչնչացրել էր **վրացահայ** գրողների համարյա ամբողջ կազմը», (Ա. Ավագյան, Եղած-չեղածը մի կյանք, էջ 135, 144, 145):

«Հայկական ժամանակ» օրաթերթ. «... ՀՀ և Վրաստանի իշխանություններին հորդորում է անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ ուղղված **վիրահայ** ստվար համայնքի, մասնավորապես Ջավախքի անհետաձգելի հիմնահարցերը լուծելու համար» (17.03.2005) և «Եվս վեց **վրացահայ** կազմակերպություններ հանդես են եկել համատեղ հայտարարությամբ» (17.02.2006):

«Ազգ» օրաթերթ. «**Վիրահայոց** թեմի առաջնորդ Վազգեն եպս. Միրզախանյանը **վիրահայ** մշակույթում կատարվելիք փոփոխությունների մասին» (01.06.2006) և «**Վրացահայ** ուսուցիչներն առաջարկում են դասավանդումն սկսել տարածայնության արժանացող պատմական հատվածներից հրաժարվելու գնով» (04.05.2005):

Տարբերակայնություն երբեմն նկատվում է նույն հրապարակման շրջանակում: Ահա վերնագիր՝ «Հպարտանում եմ ձեր աչքերի մեջ տեսնելով հայի հպարտությունը. Ն. Փաշինյանը՝ **վրացահայ** համայնքին», և դրանից անմիջապես հետո՝ առաջին պարբերության մեջ՝ «... այսօր հանդիպում է ունեցել նաև **վիրահայ** համայնքի ներկայացուցիչների հետ» («Հայկական ժամանակ», 30.05.2018):

Պատկերը շատ տարբեր չէ արևմտահայերենում: Սփյուռքյան մամուլում, համացանցային կայքերում հանդիպում են թե՛ **վիրահայ** և թե՛ **վրացահայ** տարբերակները, ինչպես նաև դրանցից կազմված հավաքական գոյականները: Համեմատենք [www.asbarez.com](http://www.asbarez.com) կայքի մի քանի վերնագրեր միայն. «**Վրացահայերու** վրդովմունքը պատգամաւորին հակահայ արտայայտութեանց հանդէպ» (15.01.2009), «**Վրացահայութիւնը** կոչ կ'ընէ Վրաստանի իշխանութեանց ճանչնալու ցեղասպանութիւնը» (12.04.2010) և «**Վիրահայերը** ուխտագնացութիւն կատարած են Արեւմտեան Հայաստան» (21.07.2015), «**Վիրահայութիւնը** նշեց Հայրենական պատերազմի յաղթանակի և Ծուշիի ազատագրման տօները» (14.05.2014): Նաև այսպիսի՝ կից գործածությամբ. «**Վիրահայ** թեմը **վրացահայ** համայնքին աջակցութեան կարիքը ունի» (06.08.2009):

Արևմտահայերենում տիրող այս խայտարդետ վիճակին մեծապես նպաստում է մասնավորապես հայաստանյան մամուլն իր անմիօրինակությամբ, քանի որ հաճախ լուրերը պարզապես փոխադրվում են արևելահայերենից: Ամեն դեպքում փաստ է, որ հայերենի գրական այս տարբերակում ևս գուգաձևություն գոյություն ունի:

**Վրացահայ**-ը, ի տարբերություն **վիրահայ**-ի, չի հանդիպում պաշտոնական որևէ մարմնի, կազմակերպության անվան կամ որևէ տեղանվան մեջ: Սա կարևոր հանգամանք է և նշանակում է, որ ներկայումս գրական հայերենը նախապատվությունը տալիս է **վիրահայ**-ին, ուստի կարծում ենք, որ ժամանակի ընթացքում **վիրահայ**-ը կարող է դառնալ միակ կանոնական բառատարբերակը՝ անփոփոխակ:



**Վրացահայ** հիմքից կազմվել է **վրացահայություն** հավաքական գոյականը, որը հաճախականությամբ մի քանի անգամ զիջում է **վիրահայություն** տարբերակին:

## **Բ. «Վրաստանի մայրաքաղաքում ապրող հայ» նշանակող բառային տարբերակները**

### **1. Թիֆլիսահայ**

Եթե **վիրահայ-ը** և **վրացահայ-ը** ընդհանուր անուններ են, ապա **Վրաստանի մայրաքաղաքի անվան տարբերակներից** կազմվածները՝ մասնավոր անուններ: Դրանք երեքն են:

Քաղաքի **Թիֆլիս** անվան հիմքով կազմվել է **թիֆլիսահայ** բառը, որը 20-րդ դարի սկզբին արդեն գործածվում էր հայ մամուլում: Օրինակ՝ «**Թիֆլիսահայ** մամուլը Աճեմեանի նման անձնաւորութիւններ անյայտ թողած է մեզի համար» («Աշխատանք», Եր., 18.06.2016): Բառն ընդունված է հայերենի գրական երկու տարբերակներում՝ և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում: Հանդիպում է տարբեր ոճերում:

Գեղարվեստական. «**Թիֆլիսահայ** հասարակության վերնախավը հիմնականում ռուսախոս էր» (Ա. Այվազյան, «Եղած-չեղածը՝ մի կյանք», էջ 35), «**Առիթը թիֆլիսահայի** հարսանիքն էր, որը ձգվեց ամբողջ երեք օր ու երեք գիշեր» (Վ. Դավթյան, «Մեղուզայի ժպիտը և այլ ճեպանովելներ», Եր., 2019, էջ 46)

Հրապարակախոսական. «Այո, լռութիւնը ոսկի է, բայց ճղճիմ, անարժէք, անգոյ խնդիրներու համար ըսուած է. լռութեան պէտք է մատնուիին բոլոր մանր խնդիրները ըսի-ըսաւները, անձնականութիւններ շօշափող հարցերը, եսերը, սնափառութիւնները, վէճեր, որոնք զուրկ են հանրային որ և է արժէքէ, գծուծ հաշիւները և այլ մանրուքներ, որոնցով լիքն է **Թիֆլիսահայ** <sup>18</sup> մամուլը» («Աշխատանք», Եր., 02.06.1916):

Գիտական խոսքում, օրինակ՝ «Հայկական սովետական հանրագիտարանի» տարբեր հատորներում. «Հայտնի է «Վալ, իմ կորած հիսուն ոսկին» մեկ գործողությամբ վողևիլով, որտեղ արտացոլել է XIX դ. կեսերի **թիֆլիսահայ** վաճառականների կյանքը» (հատ. 1, 1974, էջ 134. «Ն. Ալադաթյան» բառահոդվածը), «1846-ին **թիֆլիսահայ** առաջին պարբերականի («Կովկաս») հրատարակությունից հետո մինչև XX դ. սկիզբը Թբիլիսիում լույս են տեսել .... շուրջ 200 անուն .... օրաթերթեր, շաբաթաթերթեր և ամսագրեր» (հատ. 4, 1978, էջ 158. «Թբիլիսի»), «1651-ին **թիֆլիսահայ** մեծահարուստ խոջա Բեհբուտի պատվերով վերանորոգվել է Հաղպատի Ս. Նշան եկեղեցին» (հատ. 8,

<sup>18</sup> Այդ շրջանում այս կարգի բառերի մեծատառով կամ փոքրատառով գրությունը հստակ կանոնադրված չէր: Ուղղագրական տարբերակներ հանդիպում են նաև արևմտահայ, ապա՝ սփյուռքյան մամուլում:

1982, էջ 190. «Նավասարդ Առնշեցի»), «Սայաթ-Նովայի լեզուն արլ. փոխառություններով և ժող. մտածողության կենդանի արտահայտություններով հարուստ **թիֆլիսահայ** խոսվածքն է» (հատ. 10, 1984, էջ 163. «Սայաթ-Նովա»), «Նա գրել է **թիֆլիսահայ**<sup>19</sup> բարբառով՝ հասարակ ժողովրդին հասկանալի լինելու համար» (հատ. 11, 1985, էջ 192. «Գ. Սունդուկյան») և այլն:

Սայրաքաղաքի անունը հայերեն գրավոր խոսքում հանդիպում է նաև **գ**-ով, ուստի կազմվել է բառի **թիֆլիզահայ** ուղղագրական տարբերակը ևս, որը գործածվում է առավելաբար արևմտահայերենում (ինչպես անցյալում, այնպես էլ հիմա): Օրինակներ՝ «Նիւթը առնուած է **Թիֆլիզահայ** կեանքէ և գրուած է վրացահայ բարբառով» («Արեւ», Գահիրե, 04.06.1928), «Ձեռնարկին ներկայ եղած են Վիրահայոց Թեմի հոգեւոր դասը, Վրաստանի մօտ Հայաստանի դեսպանութենէն դիւանագէտներ, համայնքային կառոյցներու ղեկավարներ, **թիֆլիզահայ** մտաւորականներ» («Ժամանակ», Կ. Պոլիս, 21.12.2016):

Հայերեն ժողովրդական խոսքում **թիֆլիսեցի** բառը ևս գերազանցապես ընկալվում է «թիֆլիսեցի հայ» իմաստով: Այդ են հաստատում նաև հայ դասական գրականության մեջ սփռված բազմաթիվ օրինակները (անշուշտ հանդիպում են **թիֆլիսեցի հրեա / եզդի / թուրք / ռուս** բառակապակցությունները ևս, բայց քիչ):

**Թիֆլիսահայ** բառից կազմվել է **թիֆլիսահայություն** հավաքական գոյականը, որը գործածության մեծ ընդգրկում ունի: Օրինակ՝ «Այս քաղաքում ստեղծագործել են Սայաթ-Նովան, Գաբրիել Սունդուկյանը, Հովնաթանյան նշանավոր տոհմը, Գ. Բաշինջաղյանը, Ե. Թադևոսյանը, Վ. Խոջաբեկյանը, Ա. Բաժբեուկ-Մելիքյանը, Ե. Քոչարը և այլ գործիչներ, որոնց անուններն անքակտելիորեն ձուլված են **թիֆլիսահայության** պատմությանը» («Լրաբեր» հաս. գիտ., 2010, N 1-2, էջ 149):

## 2. Թբիլիսահայ

Վերջին տասնամյակներում գործածության մեջ է մտել **թիֆլիսահայ**-ի մի տարբերակը՝ **թբիլիսահայ**, որի հիմքում Վրաստանի մայրաքաղաքի ներկայիս անունն է: Օրինակներ՝ «Ելույթ ունեցավ **թբիլիսահայ** արձակագիր Մ. Ասլանյանը» («Գրական թերթ», 21.05.1965), «Քանդակի գաղափարը ծնվել է **թբիլիսահայ** լուսանկարիչ Յուրի Մեչխտովի լուսանկարից, որտեղ Փարաջանովը պատկերված է ցատկի պահին՝ ձեռքերը լայն տարածած» («Առավոտ», 09.11.2004), «**Թբիլիսահայ** համայնքը 5000 դուրար է հանգանակել սիրիահայության համար» («Երկիր», 06.08.2013):

ԱՐԵՎԱԿ-ում **թիֆլիսահայ** բառաձևը հանդիպում է 64 համատեքստում (44 տեքստում), իսկ **թբիլիսահայ**-ը՝ անհամեմատ քիչ՝ 12 համատեքստում:

19 Բնագրում մեծատառով է, որ սխալ է:

տում (10 տեսառում): Վիճակագրական այս տվյալները հուշում են, որ **թբիլիսահայ**-ը «քաղաքացիություն ստացած» բառ է: Ասվածի վկայություններից մեկն էլ այն է, որ բառը վերջին շրջանում հանրագիտարանային գործածություն է ունեցել, ինչպես՝ «**Թբիլիսահայ** երաժշտական կյանքում մեծ ավանդ ունեն Մ. Եկմայանը, Գենարիոս և Վասիլ Ղորղանյանները, Գ. Սյունին... » («Հայ սփյուռք», Եր., 2003, էջ 547):

Հայաստանի և Հայաստանից դուրս գործող հայերեն (արևելահայերեն և արևմտահայերեն) լրատվամիջոցներն այժմ գործածում են երկու տարբերակներն էլ: Օրինակներ՝ «... չեմ կարող թաքցնել հիացումներս **թբիլիսահայ** բանաստեղծուհի և թարգմանչուհի Անահիտ Բոստանջյանի «Մեր և անջրպետ» հայերեն ու վրացերեն երկհատորյակի նկատմամբ» ([www.vrastan.ge](http://www.vrastan.ge), 13.05.2013, Վրաստան), «**Թբիլիսահայ** կնոջ ձեռագործության ցուցահանդես» ([www.yerkramas.org](http://www.yerkramas.org), 21.12.2011, Ռուսաստան), «Նոր դիտարկումներ **թիֆլիսահայ** իրականության շուրջ» ([www.asbarez.com](http://www.asbarez.com), 20.06.2007, ԱՄՆ), «Հայաստանի Գրողներու միության նախագահը եւ վիրահայոց թեմի առաջնորդը, **թիֆլիսահայ** մտաւորականութեան ներկայացուցիչներու եւ առաջնորդարանի պաշտօնէութեան հետ ուղղուած են Յովհաննէս Թումանեանի Թիֆլիսի բնակարան» ([www.aztagdaily.com](http://www.aztagdaily.com), 19.06.2015, Լիբանան) և այլն: Արևմտահայերենն այս հարցում կարծեք ավելի պահպանողական է և նախապատվությունը տալիս է ավանդական **թիֆլիսահայ**-ին:

Նկատելի է նաև, որ նույն լրատվամիջոցը երբեմն գործածում է բառի զույգ տարբերակները (**վիրահայ** – **վրացահայ** տարբերակների նման): Համեմատենք.

«Ազգ» օրաթերթ. «Մի բռու արև **թբիլիսահայ** երեխաներին ու պատանիներին» (14.06.2006) և «Վրաց-օսական պատերազմը նոր իրողություն ստեղծեց ոչ միայն աշխարհում, տարածաշրջանում ..., այլև հայ համայնքներում և մասնավորապես **թիֆլիսահայ** համայնքում» (04.10.2008):

«Առավոտ» օրաթերթ. «Հայոց բանակի տոնը **թբիլիսահայ** համայնքում» (29.01.2017) և «... մինչև կյանքի վերջին տարիները անբաժան մնալով իր սիրելի մորից՝ Նորա Դովլաթովայից (**թիֆլիսահայ**) » (09.05.2002):

Հանդիպում են բնագրային հետաքրքրական օրինակներ: Դիտարկենք սա. «Հռչակավոր Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի դուստր Չուլեյկան այժմ ապրում և ստեղծագործում է Թբիլիսիում՝ շարունակելով **թիֆլիսահայ** նկարչական դպրոցի ավանդույթները» («Առավոտ», 25.03.2008): Միևնույն խոսքաշարում գործածվել են **Թբիլիսի** հատուկ անունը և **թիֆլիսահայ** բառը: Առաջին հայացքից խնդրահարույց գործածություն է, այնինչ միանգամայն ճիշտ է, քանի որ խոսքի առարկան Վրաստանի այժմյան մայրաքաղաքն է (այդ իսկ պատճառով՝ **Թբիլիսի**) և պատմական անցյալի ավանդույթները (դրա համար էլ՝ **թիֆլիսահայ**):

Ժամանակի ընթացքում հնարավոր ենք համարում, որ **թբիլիսահայ**-ի գործածությունը փոքր-ինչ ավելանա, հատկապես՝ պաշտոնական խոսքում կիրառվելու շնորհիվ: Կարևոր է վիրահայ մամուլի դիրքորոշումը քննարկված տարբերակների նկատմամբ: Նկատելի է, որ ներկա իրողությունների և ժամանակակիցների առնչությամբ նախընտրելի է գործածել **թբիլիսահայ**-ը: Թբիլիսիում լույս ընծայվող «Վրաստան» հասարակական-քաղաքական թերթի կայքում ([www.vrastan.ge](http://www.vrastan.ge)) որոնման այսպիսի արդյունքներ գրանցվեցին. **թիֆլիսահայ` 1, թբիլիսահայ` 16**:

**Թբիլիսահայ** բառից ևս օրինաչափորեն կազմվել է **թբիլիսահայություն** հավաքական գոյականը, որը տարածվելու միտում ունի: Օրինակ՝ «Հանդիսությանը ներկա էր **թբիլիսահայության** ներկայացուցիչ, բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը» («Իրատես», 16.10.2009):

Հայերենի բառարաններում **թբիլիսահայ**-ը և **թբիլիսահայություն**-ը տակավին չեն արձանագրվել (իսկ միայնակյան բառարանները շուրջ կես դար առաջ են հրատարակվել):

### 3. Տփղիսահայ

«Վրաստանի մայրաքաղաքում ապրող հայ» նշանակող բառային տարբերակներից մեկի սկզբնաբաղադրիչը մայրաքաղաքի հին՝ Տփղիս անունն է (կանան **Տփխիս** ուղղագրական տարբերակը), որը հայերեն աղբյուրներում առաջին անգամ վկայվել է «Գիրք թղթոց» ժողովածուի 7-րդ դարի առաջին տասնամյակում գրված պաշտոնական գրություններում<sup>20</sup>: **Տփղիսահայ** բառի մեր ունեցած ամենավաղ վկայությունը 20-րդ դարասկզբից է. «**Տփղիսահայ** ուխտագնացներն յաճախ կ'այցելեն այդ մատուռը» («Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 15.06.1905):

**Տփղիսահայ**-ը հաճախականությամբ չի կարող համեմատվել մյուս տարբերակների հետ. խիստ հազվադեպ է կիրառվում: Հանդիպում է մամուլում, գիտական խոսքում: Օրինակներ՝ «Ունկնդրելով վրաց Հերակլ թագավորի և տփղիսահայ հոգևոր և աշխարհիկ դասի երևելիների գրավոր խնդրանքներին...» («Պատմա-բանասիրական հանդես», 1969, N 3, էջ 211), «... **տփղիսահայերը** «... աշխույժ առևտուր են անում լեռնականների և պարսկահպատակ մերձակա հարևանների հետ» («Լրաբեր» հաս. գիտ., 1976, N 11, էջ 21), «Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակը **տփղիսահայ** համայնքը, ամենայն հավանականությամբ, կդիմավորի առանց սեփական եկեղեցու գոյության» («Հայք», 19.10.1995): Մեր կարծիքով՝ բառային այս տարբերակի ընտրությամբ հեղինակները փորձում են պատմական (տարածական, ժամանակային) որոշակի բներանգ ստեղծել: **Տփղիսահայ**-ը հնացած է և իբրև բառային տարբերակ զիջում է նախորդներին (**թիֆլիսահայ** և **թբիլիսահայ**), ստորադասության հա-

20 Տե՛ս Սուրադյան Պ., Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ 11:

րաբերություն ունի դրանց նկատմամբ: **Տփղիսահայ**-ից կազմվել է հավաքական գոյականը՝ **տփղիսահայություն**: Օրինակ՝ «Չեն հասցրել սպիանալ Նորաշենի նկատմամբ գործադրված արարքի հետևանքով **տփղիսահայությանը** հասցված վերքերը» («Հայք», 19.10.1995):

Հայերենի որևէ բառարանում ոչ **տփղիսահայ**-ը և ոչ էլ **տփղիսահայություն**-ը չեն արձանագրվել:

#### **Գ. Բառային տարբերակների բառարանային մշակումը**

Պարզենք, թե **վիրահայ / վրացահայ / վրահայ, թիֆլիսահայ / թբիլիսահայ** բառերը ե՞րբ և հայերենի ո՞ր բառարաններում են արձանագրվել (կամ արդյոք արձանագրվել են), բառարանային ինչպիսի՞ մշակման են ենթարկվել<sup>21</sup>:

Հայերեն առաջին բառարանը, որը որոշակիորեն համակարգված արձանագրել է «Հայաստանից դուրս ապրող հայ» նշանակող բառերը, թարգմանական է՝ Հ. Դադբաշյանի նշանավոր բառարանը, որտեղ գրանցվել են **եգիպտահայ, թուրքահայ / թրքահայ, պարսկահայ, ռուսահայ, տաճկահայ**, ինչպես նաև **կովկասահայ** բառերը<sup>22</sup> (Հյուսիսային Կովկասում, Այսրկովկասում, այդ թվում՝ Վրաստանում ապրող հայերն ընկալվում էին իբրև կովկասահայեր): Վերջին բառը մասամբ առնչվում է մեզ հետաքրքրող բառախմբին: Թիֆլիսում լույս տեսած այս արժեքավոր բառարանում, սակայն, «Վրաստանում ապրող հայ» իմաստն արտահայտող որևէ բառ չկա:

«Հայաստանից դուրս ապրող հայ» նշանակությամբ բառեր արձանագրած հայերեն միակեզվյան առաջին բառարանը Ստ. Մալխասյանցի բացատրականն է, որտեղ գրանցվել են **ամերիկահայ, անգլիահայ, եգիպտահայ, թուրքահայ / թիրքահայ, լեհահայ, հնդկահայ, հունգարահայ, ռուսահայ**, նաև **կովկասահայ** բառերը<sup>23</sup>: Սակայն Ախալցխայում ծնված և Թիֆլիսում լայն գործունեություն ծավալած բառարանագիրը չի գրանցել **վիրահայ**-ը և **թիֆլիսահայ**-ը: Ի վերջո այս բառերն առաջին անգամ ե՞րբ են արձանագրվել հայերեն բառարաններում:

Ըստ մեր տվյալների՝ **վիրահայ**-ն առաջին անգամ գրանցվել է Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանում<sup>24</sup>, բայց ոչ իբրև գլխաբառ: Այն զետեղվել է **հայ** հենաբառի ներքո, որտեղ **հայազգի, հայազարմ** և այլ հոմանիշներից հետո տրված են **սփյուռքահայ, արևելահայ, արևմտահայ, ռուսահայ, վրացահայ, վիրահայ, ամերիկահայ, եգիպտահայ, պարսկահայ, կովկասահայ** և այլ բառեր: Բառարանից օգտվողը կդժվարանա կողմնորոշվել՝ **վրացահայ** և

21 Տե՛ս **Գյուրջինյան Դ.**, «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի բառարանագրական վերլուծություն, «Էջմիածին», 2017, Ժ, էջ 37-68: Նույնի «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի ներկայացումը հայերենի թարգմանական բառարաններում, «Բանբեր Երևանի համալսարանի»...Հայագիտություն, Եր., 2017, N 2, էջ 59-77:

22 Տե՛ս **Դադբաշյան Հ.**, Լիակատար բառարան հայերենից ռուսերեն, Թիֆլիս, 1911:

23 Տե՛ս **Մալխասյանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1-4, Եր., 1944-1945:

24 Տե՛ս **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 361:

**վիրահայ** բառերը հոմանիշներն են, թե՛ տարբերակներ, դրանք գործածության յուրահատկություններ ունե՞ն արդյոք: Ինչևէ, **վիրահայ / վրացահայ**-ը, տևական ժամանակ լեզվում գործածության մեջ լինելով, վերջապես գրանցվեց հայերեն բառարանում:

Էդ. Ադայանի բացատրական բառարանում գրանցվել են **վրաց** բառը, դրանով բաղադրված մի շարք բառեր (այդ թվում՝ հազվադեպ հանդիպող կամ պարզապես անգործածական)՝ **վրացաբան** (նաև **վրացաբանական, վրացաբանություն**), **վրացագետ** (**վրացագիտական, վրացագիտություն**), **վրացազգի, վրացախոս, վրացական, վրացանալ, վրացասեր** (նաև **վրացասիրական, վրացասիրություն**), **վրացատյաց** (**վրացատեցական, վրացատեցություն**), **վրացերեն, վրացիանալ**, հոգնակիով՝ **վրացիներ** (բառահոդվածում եզակիով տրվում են **վրացի, վրացուհի** և **վիրուհի**), **վրացնակ, վիր** բաղադրիչով կազմված հնացած **վիրախոս**-ը, գլխաբառ է դարձել **ՎԻՐՔ**-ը («հին» նշումով)՝ իբրև «վրացիներ» և «Վրաստան», սակայն անտեսվել են **վիրահայ / վրացահայ**-ը և **վիրահայություն**-ը<sup>25</sup>: Չկա նաև **թիֆլիսահայ**-ը:

Ակադեմիական բացատրական բառարանն արձանագրել է **վիրահայություն** բառը՝ «Վրաստանում ապրող հայերը, Վրաստանի հայությունը, վրացահայություն» բացատրությամբ<sup>26</sup>: Հավաքական գոյականի գրանցումը, անշուշտ, անհրաժեշտ քայլ է, սակայն շրջանցվել է բառակազմական հիմքը՝ **վիրահայ**-ը, որն անվանում է այդ հավաքականության առանձին ներկայացուցչին:

Նկատենք, որ բառարանն ունի **թիֆլիսահայ** «թիֆլիսեցի հայ» և **թիֆլիսահայություն** «թիֆլիսահայերի ամբողջությունը» բառերը<sup>27</sup>: Սա դրանց բառարանային առաջին գրանցումն է: Նշվում է **թիֆլիսահայ**-ի խոսքիմասային երկու արժեք. գոյ.՝ «Թիֆլիսիում բնակվող հայ» իմաստով, ած.՝ «Թիֆլիսի հայկական» իմաստով: Բերված է բնագրային օրինակ Ա. Սահինյանից («Ներկա էր թիֆլիսահայ հասարակության սերուցքը»):

Առհասարակ հետաքրքրական իրողություն է, երբ բառարանն արձանագրում է քաղաքանունից **հայ** բաղադրիչով կազմված բառ, թեպետ այդտեղ **թիֆլիսահայ**-ը միակը չէ. կա նաև **պոլսահայ**-ը: Ամենևին պատահական չէ այս բառերի ներառումը բառացանկ. 19-րդ դարում Թիֆլիսն ու Պոլիսը արևելահայության և արևմտահայության մշակությամբ ու հասարակական կյանքի կենտրոններն էին:

Հայերենի նոր ուղղագրությունն արտացոլող ամենաձավայուն բառարանում չեն արձանագրվել ակադեմիական բացատրական բառարանում գրանց-

25 Հմնտ. **Ադայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1401, 1393, 1394: Այս բառարանի նորացված տարբերակում (**Ադայան Էդ.**, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, խմբագիր՝ Լ. **Հովսեփյան**, Եր., 2014) հազվադեպ և անգործածական բառերը գեղջվել են, սակայն «Վրաստանի հայ» նշանակող բառերը կրկին բացակայում են:  
26 Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 4, Եր., 1980, էջ 416:  
27 Տե՛ս նույն տեղում, հատ. 2, Եր., 1972, էջ 205:

ված **թիֆլիսահայ**-ը (սակայն կան **թիֆլիսաբնակ**-ը և **թիֆլիսեցի**-ն) և հոմանիշների բառարանում հիշատակված **վիրահայ**-ը, թեև կան «հնացածն նշումով **վիրախոս**-ը և **վիրախոսական**-ը<sup>28</sup>։ Բառացանկում **պոլսահայ**-ի և **փարիզահայ**-ի առկայությունը հասկանալի է. Կ. Պոլիսը և Փարիզը արևմտահայ (ապա և սփյուռքահայ) կյանքի կարևորագույն կենտրոններ էին (և են)։ Որքան ճիշտ է այս բառերի ընտրությունը, նույնքան անբացատրելի է **թիֆլիսահայ**-ի անտեսումը, քանի որ Թիֆլիսն էլ արևելահայության մշակութային-հասարակական-կրթական կարևոր կենտրոնն էր 19-րդ դարի կեսերից սկսած մինչև խորհրդային կարգերի հաստատումը։ Մյուս կողմից՝ բառի ուղղագրությունն ավելի դժվար է (**գ-ս**-ի և տարբերակայնության խնդիր կա), քան նշվածներինը։

Գրողի լեզվի բառարանում **թիֆլիսահայ**-ի գրանցման հիմք է դարձել Պ. Սևակի «Մայաթ-Նովա» մենագրությունից քաղված նյութը<sup>29</sup>։ Բառը նշվել է անծականի արժեքով, երկու իմաստով՝ 1. «թիֆլիսաբնակ հայ» («Ինձ խանգարել է ... **թիֆլիսահայ** չլինելս») և 2. «Թիֆլիսում բնակվող հայերին հատուկ» («**Թիֆլիսահայ** բարբառ»)։ Այս վերջին ձևակերպումն ավելի ճիշտ է, քան ակադեմիական բացատրական բառարանում տրված «Թիֆլիսի հայկական»-ը։

Հայերենի ուղղագրական դպրոցական բառարանում արձանագրվել է **թիֆլիսահայ**-ը (ի դեպ, կան նաև **պոլսահայ**-ը և **փարիզահայ**-ը), սակայն դուրս է մնացել **վիրահայ**-ը<sup>30</sup>։

Քերականական բառարան-տեղեկատուում կա ընդհանուր անունը՝ **վիրահայ**-ը (նշվում է հոգնակիի **-եր** մասնիկը<sup>31</sup>), սակայն բացակայում է **թիֆլիսահայ**-ը։ Ե՛վ **թիֆլիսահայ**-ը, և՛ **վիրահայ**-ը արձանագրված են Մ. Մինասյանի կազմած ավանդական ուղղագրության բառարանում<sup>32</sup>, միայն թե իբրև գլխաբառ տրված է հոգնակի սեռականի **վիրահայոց** ձևը (հիմքը՝ **վիրահայ**-ը, թերևս վրիպմամբ, բացակայում է)։ Այստեղ «արտերկրի հայ» նշանակող բառերի կողքին սովորաբար տրվում են դրանց հավաքականները (օրինակ՝ **վիրահայություն, թիֆլիսահայություն**) և իզական սեռի ներկայացուցիչների՝ հիմնականում շինծու, անգործածական անունները, ինչպես՝ **վիրահայուհի, եգիպտահայուհի, եթովպահայուհի, փարիզահայուհի**։ Սակայն որոշ դեպքերում (**արխագահայ, ամերիկահայ, թիֆլիսահայ**) դրանք չեն տրվում։ Դա, անշուշտ, պակասությունն է, այլ տվյալ բառարանում բառերը ներկայացնելու համակարգայնության խախտում։

28 Տե՛ս **Բարսեղյան Հ. Խ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Եր., 1973, էջ 877։ Բառարանում գրանցվել է **արխագահայ**-ը (Աբխազիան խորհրդային շրջանում ինքնավար հանրապետություն էր Կրաստանի կազմում)։

29 Տե՛ս **Պապոյան Ա.**, Պարոյր Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարան, Եր., 1986, էջ 185։ Ի դեպ, այստեղ կա նաև **թիֆլիսահայերեն**-ը «թիֆլիսահայերի բարբառը» բացատրությամբ։

30 Տե՛ս **Նազարյան Ռ., Գյոդակյան Ա.**, Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան, Եր., 2004, էջ 152։ Կա նաև **արխագահայ**-ը, քանի որ բառն ուղղագրական դժվարություն ունի։

31 Տե՛ս **Գյուրջինյան Դ.**, Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու, Եր., 2005, էջ 121։

32 Տե՛ս **Մինասյան Մ.**, Հայերեն ավանդական ուղղագրության բառարան, Ժն., 2000, էջ 314, 855 (գիրքը դժվարիասանելի է անգամ գիտական հանրությանը, քանի որ ընդամենը 25 օրինակ է տպվել)։

Ակադեմիական բացատրական բառարանի հետևողությամբ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած հայ-ռուսերեն բառարանը գրանցել է **Վիրահայություն**-ը՝ «армяне, проживающие в Грузии, грузинские армяне» թարգմանությամբ<sup>33</sup>, սակայն դարձյալ անտեսվել է **վիրահայ**-ը (նաև **թիֆլիսահայ**-ը): Հարկ է նշել, որ **վիրահայ** և **թիֆլիսահայ** բառերը հիմնականում բացակայում են հայերենի թարգմանական բառարաններում: Թեև միաժամանակ պետք է ընդունել, որ այս հարցում մեղքի իրենց բաժինն ունեն նախ հայերեն միալեզվյան բառարանները, քանի որ թարգմանական բառարանների հիմքում հաճախ հենց դրանց բառացանկերն են ընկնում: Հայերեն թարգմանական բառարաններից **վիրահայ**-ը հանդիպում է հայերեն-պարսկերեն բառարանում՝ այսպիսի թարգմանությամբ ساکن ارمنی<sup>34</sup> (արմանիե սաքենե Գորջեսթան՝ «Վրաստանում ապրող հայ»): Թվում է՝ դա **վիրահայ**-ի առաջին և առայժմ միակ արձանագրումն է այդ տեսակի բառարաններում:

«Վրաստանում կամ նրա մայրաքաղաքում ապրող հայ» նշանակող բառեր չեն գրանցվել նաև հայ-վրացերեն բառարանում<sup>35</sup>, թեպետ դա զարմանալի չէ, քանի որ ընդգրկված բառապաշարը բավական սահմանափակ է: Բառացանկում առհասարակ չկան «հայրենիքից դուրս ապրող հայ» իմաստն արտահայտող բառեր, այդ թվում՝ «արտերկրի հայ» իմաստային խմբի ընդհանուր անունը՝ **սփյուռքահայ** (բայց կան հայության երկու սովոր հատվածների ներկայացուցիչներին անվանող **արևելահայ**-ը և **արևմտահայ**-ը):

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում **վիրահայ** և **թիֆլիսահայ** բառերի արձանագրման և բառարանային մշակման մեծ փորձ չկա: **վիրահայ**-ը և **թիֆլիսահայ**-ը հանդիպում են չորսական բառարանում (**վիրահայություն** և **թիֆլիսահայություն** հավաքականները՝ երկուական): Սա, անշուշտ, երևելի ցուցանիշ չէ, եթե համեմատենք **ռուսահայ**, **տաճկահայ**, **եգիպտահայ**, **հնդկահայ**, **պարսկահայ** կամ **ամերիկահայ** բառերի հետ, որոնք հաճախադեպ են (տապը և ավելի անզամ): Մեր կարծիքով՝ հիմնական պատճառներից մեկը հայերենում **վիրահայ / վրացահայ / վրահայ** տարբերակների առկայությունն է եղել և անհատակությունը, թե դրանցից ո՞րն է առավել ընդունելի գրական-պաշտոնական լեզվում:

### Եզրակացություններ

1. «Վրաստանում բնակվող հայ, Վրաստանի՝ վրաստանցի հայ» նշանակող հայերեն բառային երեք տարբերակներ են կազմվել՝ **վիրահայ**, **վրացահայ**, **վրահայ**, որոնց առաջին բաղադրիչը **Վիրք** երկրանվան անհնչյունափոխ, հնչյու-

33 Տե՛ս «Հայ-ռուսերեն բառարան», Եր., 1984, էջ 642:

34 Տե՛ս Դավթյան Տ., Հայերեն-պարսկերեն բառարան, Եր., 2011, էջ 395:

35 Տե՛ս Մելիքսեթ-Քեչեկ Լ., Հայերեն-վրացերեն բառարան, վերամշակել, լրացրել ու հրատարակության է պատրաստել Մ. Ռոբաքիճեն, Թբիլիսի, 1996:



նափոփված և սեռականի ձևերն են, երկրորդ բաղադրիչն անփոփոխ է՝ **հայ**, որն իմաստային բեռը կրողն է: Գործածության մեջ են ընդհանուր անուններից անձանցված **վիրահայություն** և **վրացահայություն** հավաքական գոյականները: Բոլորն էլ նոր շրջանի (19-20-րդ դդ.) կազմություններ են:

2. Հայերենի ներկա փուլում գործածության մեջ են **վիրահայ** և **վրացահայ** տարբերակները: **Վիրահայ**-ը բնորոշ է պաշտոնական խոսքին, նախընտրելի է Վրաստանի հայության համար, և հենց **վիրահայ**-ն է գլխաբառ դարձել հայերենի բառարաններում:

3. «Վրաստանի մայրաքաղաքում բնակվող հայ» նշանակող հայերեն տարբերակային երեք բառեր են կազմվել մայրաքաղաքի հին և նոր անուններից՝ **թիֆլիսահայ** (ուղղագրական անհանձնարարելի տարբերակը՝ **թիֆլիզահայ**), **թբիլիսահայ**, **տփղիսահայ**: Գործածվում են սրանց հավաքականները՝ **թիֆլիսահայություն**, **թբիլիսահայություն**, **տփղիսահայություն**: Բառարաններում արձանագրվել են միայն **թիֆլիսահայ**-ը և **թիֆլիսահայություն**-ը: Ժամանակի պահանջ է բառարանագրել նաև **թբիլիսահայ**-ը և **թբիլիսահայություն**-ը, քանի որ դրանք նոր իրողությունների արտահայտիչներն են և ընդհանրանալու միտում ունեն:

4. «Վրաստանում և նրա մայրաքաղաքում ապրող հայ» նշանակող բառերը բազմիմաստ են, ձևաբանորեն տարարժեք՝ ածական և գոյական:

5. **Վիրահայ** բառի հոգնակի սեռականի ձևը՝ **վիրահայերի**-ն, զուգաձևություն ունի՝ **վիրահայոց**, որը հոգնակի սեռականի գրաբարակերպ քարացած ձևն է: Վերջինս կայունացել է **Վիրահայոց թեմ** բաղադրյալ անվանման և **Վիրահայոց լեռներ** տեղանվան մեջ:

6. **Վիրահայ / վրացահայ** և **թիֆլիսահայ / թբիլիսահայ / տփղիսահայ** տարբերակային բառերը, դրանցից կազմված հավաքականները տարբեր հաճախականությամբ գործածվում են լեզվի գործառական բոլոր ոճերում:

**Գավիթ Ս. Գյուրջինյան** - գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայոց լեզվի բառակազմությունը և բառակազմական իմաստաբանությունը, բառապաշարը, բառարանագրությունը և բառարանագիտությունը, խոսքարվեստը, արդի հայերենի ուսուցման հարցերը: Շուրջ 150 գիտական, ուսումնական և մեթոդական գրքերի, հոդվածների, աշխատանքների հեղինակ (և համահեղինակ) է:

## Summary

# LEXICAL VARIANTS OF THE ARMENIAN LANGUAGE MEANING “ARMENIAN LIVING IN GEORGIA”

Davit S. Gyurjinyan

*Candidate of Philological Sciences*

**Key words** - Armenian from Georgia, Armenian living in Georgia, lexical variants, Georgian Armenian, Georgian Armenians, Armenian from Tbilisi/Tiflis, lexical-semantic group “Armenian from abroad”.

To denote the concept of “an Armenian living in Georgia, an Armenian from Georgia”, lexical variants were formed in the Armenian language, whose first components are the basis of the name of the neighboring country: վրասիայ (outdated word), վիրասիայ, վրացահայ, as well as new and outdated names of its capital: թբիլիսահայ, թիֆլիսահայ, սփղիսահայ (rarely used) “Armenian from Tbilisi /Tiflis/ Tprghis”. All the words and their variants are formations of the 19th-20th centuries, although Armenians have been living in Georgia since ancient times.

With the help of suffixes, collective nouns were formed on the basis of the listed lexical variants: վիրասիայույթյուն “Armenians of Georgia as a community, totality of Armenians of Georgia”, թիֆլիսահայույթյուն “Armenians from Tiflis”, etc.

Only two variants (out of six) are recorded in the dictionaries of the Armenian language: վիրասիայ “an Armenian living in Georgia, an Armenian from Georgia”, which is adopted in the official Armenian language and is considered acceptable for the Armenians of Georgia (since the variant վրացահայ is often interpreted as Georgianized Armenian), and թիֆլիսահայ “Armenian from Tiflis”.

The lexical variants under study are used in different styles with the meaning of a noun and an adjective.

## Резюме

# ЛЕКСИЧЕСКИЕ ВАРИАНТЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА, ОБОЗНАЧАЮЩИЕ «АРМЯНИН, ПРОЖИВАЮЩИЙ В ГРУЗИИ»

Давид С. Гюрджинян

*Кандидат фил. наук*

**Ключевые слова** - армянин из Грузии, армянин, проживающий в Грузии, лексические варианты, грузинский армянин, армяне Грузии, армянин Тбилиси/Тифлиса, лексико-семантическая группа «армянин зарубежья».

Для обозначения понятия «армянин, проживающий в Грузии, армянин из Грузии» в армянском языке образовались лексические варианты, первые компоненты которых – это основа названия соседней страны: լրիւիւիւիւիւիւ (устаревшее слово), լրիւիւիւիւիւ, լրիւիւիւիւիւ, а также новое и устаревшие названия ее столицы: թրիլիւիւիւիւիւ, թիֆլիւիւիւիւ, տիֆլիւիւիւիւ (редко употребляемое) «армянин Тбилиси / Тифлиса / Тпхиса». Все слова и их варианты – образования XIX-XX веков, хотя армяне живут в Грузии с давних времен.

С помощью суффиксации на основе перечисленных лексических вариантов образовались собирательные существительные: լրիւիւիւիւիւիւիւ «армяне / армянство Грузии как общность, совокупность армян Грузии», թրիֆլիւիւիւիւիւիւ «армяне Тифлиса» и т. д.

В словарях армянского языка зафиксированы только два варианта (из шести): լրիւիւիւиւиւиւиւ «армянин, живущий в Грузии, армянин из Грузии», который принят в официальном армянском языке и считается приемлемым для армян Грузии (так как вариант լրիւիւиւиւиւиւ часто интерпретируется как огрузинившийся армянин), и թիֆլիւիւиւиւиւиւ «армянин Тифлиса».

Исследуемые лексические варианты употребляются в разных стилях в значении существительного и прилагательного.

## REFERENCES

1. **Abrahamyan A. G.**, Hamaṛot urvagits hay gaght'avayrerı patmut'yan, vol. A, Yer., «Haypethrat», 1964 (**In Armenian**).
2. **Aghayan Ė. B.**, Ardi hayereni bats'atrankan baṛaran, Yer., «Hayastan», 1976 (**In Armenian**).
3. **Aghayan Ė. B.**, Ardi hayereni ardzem bats'atrankan baṛaran, Yer., «Manmar, 2014 (**In Armenian**).
4. **Aghayan Ė. B.**, Ėndhanur yev haykakan baṛagitut'yun, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1984 (**In Armenian**).
5. **Acharyan Hr.**, Hay gaght'akanut'yan patmut'yun, Yer., «Zangak-97», 2002 (**In Armenian**).
6. **Alpoyachean A.**, Patmut'iwn hay gaght'akanut'ean: Hayeru ts'ruumě ashkharhi zanazan maserě, vol. 1, Gahirė, 1941 (**In Armenian**).
7. **Barseghyan H. Kh.**, Hayeren ughghagrakan-ughghakhosakan, terminabanakan baṛaran, Yer., «Luys», 1973 (**In Armenian**).
8. **Ch'amch'eants' M.**, Patmut'iwn Hayots', vol. 3, Venetik, 1786 (**In Armenian**).
9. **Daghbashyan Y.**, Liakatar baṛaran hayerėnits' ruserėn, T'iflis, 1911 (**In Armenian**).
10. **Davt'yan T.**, Hayeren-parskeren baṛaran, Yer., «Ankyunak'ar», 2011 (**In Armenian**).
11. **Ghevond**, Patmut'yun, t'argmanut'yuně, neratsut'yuně yev tsanot'agrut'yunnerě **Aram Ter-Ghevondyani**, Yer., «Sovetakan grogh», 1982 (**In Armenian**).
12. **Gyurjinyan D.**, Anun khosk'i maseri t'vi kargě ardi hayerenum: k'erakanakan baṛaran-teghekatu, Yer., «Limush», 2005 (**In Armenian**).
13. **Gyurjinyan D.**, «Arterkri hay» imastayin khmbi baṛeri nerkayats'umě hayeren t'argmanakan baṛarannerum, «Banber Yerevani hamalsarani». Hayagitut'yun, Yer., 2017, N 2 (**In Armenian**).

14. **Gyurjinyan D.**, «Arterkri hay» imastayin khmbi bařeri bařaranagrakan verlutsut'yuně, «Ējmiatsin», 2017, N 10 **(In Armenian)**.
15. **Gyurjinyan D.**, «Parskastanum aprogh hay» nshanakogh bařerě. imastakaruts'vatsk'ayin yev bařaranagrakan verlutsut'yun, «Vēm», Yer., 2018, N 1 **(In Armenian)**.
16. **Gyurjinyan D.**, Artagaght'i yev sp'rman patmut'yun. hayereni «arabakan yerkmneri hay» bařaimastayin khumbě, «Vēm», Yer., 2019, N 2 **(In Armenian)**.
17. **Ghazaryan R. S., Avetisyan H. M.**, Mijin hayereni bařaran, vol. 2, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1992 **(In Armenian)**.
18. «Hay-řuseren bařaran», Yer., Haykakan SSH GA hratarakch'ut'yun, 1984 **(In Armenian)**.
19. **Hakobyan T. Kh., Melik'-Bakhshyan St., Barseghyan H. Kh.**, Hayastani yev harakits' shrjanneri teghanunneri bařaran, vol. 4, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1998 **(In Armenian)**.
20. **Malkhasyants' St.**, Hayeren bats'atrankan bařaran, vol. 1-4. Yer., Haykakan SSR petakan hratarakch'ut'yun, 1944-1945 **(In Armenian)**.
21. **Matt'ēos Uřhayets'i**, Zhamanakagrut'yun, Yer., YePH hratarakch'ut'yun, 1991 **(In Armenian)**.
22. **Mayilyan B.**, Vrastani hayots' azgayin khorhrdi gortsuneut'yan patmut'yunits' (1918 t'. ōgostos – 1919 t'. p'etrvar), «Patma-banasirakan handes», Yer., 2011, N 1 **(In Armenian)**.
23. **Melik'set-Bek L.**, Hayeren-vrats'eren bařaran, veramshakets', lrats'rets' yev hratarakut'yan patrastets' **M. Ğobak'idze**, T'bilisi, «Nerkeri», 1996 **(In Armenian)**.
24. **Muradyan P.**, Hin T'iflisi hayots' yekeghets'inerě, S. Ējmiatsin, Mayr Ator Surb Ējmiatsni hratarakch'ut'yun, 2009 **(In Armenian)**.
25. **Minasyan M.**, Hayeren avandakan ughghagrut'yan bařaran, Zhnev, 2000 **(In Armenian)**.
26. **Nazaryan R., Gyodakyan A.**, Hayeren ughghagrakan dprots'akan bařaran, Yer., «Zangak-97», 2004 **(In Armenian)**.
27. **Papoyan A.**, Paruyr Sevaki ashkhatut'yunneri yev t'argmanut'yunneri bařaran, Yer., Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1986 **(In Armenian)**.
28. «K'ristonya Hayastan» hanragitaran, Yer., Haykakan hanragitarani glkhavor khmbagrut'yun, 2002 **(In Armenian)**.
29. **Suk'iasyan A. M.**, Hayots' lezvi homanishneri bařaran, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1967 **(In Armenian)**.
30. **Ukhtanēs episkopos**, Patmut'iwn Hayots', Vagharshapat, 1871 **(In Armenian)**.
31. «Zhamanakakits' hayots' lezvi bats'atrankan bařaran», vol. 4, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1980 **(In Armenian)**.